ՀՀ ԲՈԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին

(հասցե՝ 0025, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1)

ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Հովհաննեսի Պետրոսյանի «Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացումը վարչական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.04 «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Լիլիթ Հովհաննեսի Պետրոսյանի ատենախոսությունը նվիրված է վարչական դատավարությունում առանցքային նշանակություն ունեցող «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացմանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ քննարկվող սկզբունքի իրացման միջոցով է հնարավոր դառնում իրականացնել վարչական դատավարության խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ հանրային իրավահարաբերություններում անձանց խախտված կամ խախտման ենթակա իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը, օրինականության հաստատումը, հանրային իրավահարաբերություններում անձանց իրավունքների և ազատությունների խախտման կանխարգելումը,

արդարադատության մատչելիության երաշխավորումը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում վարչական դատավարության գոյության շուրջ 13 տարիների ընթացքում գիտական մակարդակով բացակայում է որևէ համապարփակ աշխատություն, որը կանդրադառնար «ex officio» սկզբունքին, ինչպես նաև կամփոփեր վերջին տարիներին այդ սկզբունքի իրացման առնչությամբ ձևավորված պրակտիկան և հիմնախնդիրները:

Ավելին, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը «ex officio» սկզբունքին նվիրել է ընդամենը մեկ հոդված, ինչի արդյունքում այս սկզբունքի իրացման վերաբերող մի շարք հարցեր կարգավորված չեն:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է վեր հանել թեմային վերաբերող հիմնախնդիրները, հանգամանորեն քննարկել ի պաշտոնե քննության սկզբունքի դրսևորումները և առաջարկել դրանց լուծումները:

Հեղինակը գիտակցել է թեմայի իրավագիտական հետազոտման կարևորությունը, կատարել է համապարփակ և խորը գիտական ուսումնասիրություն՝ ներկայացնելով արդիական գիտական արժեք ներկայացնող իրավական դրույթներ:

Հեղինակի կողմից ուսումնասիրվել է թեմային վերաբերող հարուստ մասնագիտական գրականություն և պրակտիկ նյութեր, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթեր և այլ երկրների փորձը:

Ատենախոսության արժանիքներից է նաև այն, որ հեղինակը հարցումներ է իրականացրել ՀՀ վարչական դատարանի դատավորների շրջանակում, մանրամասն ծանոթացել նրանց դիրքորոշումներին և նրանց կողմից «ex officio» սկզբունքի կիրառմանը, ինչը հնարավորություն է տվել բացահայտելու Վարչական դատարանի կողմից ձևավորած պրակտիկան, վեր հանել հակասությունները և հանդես գալ արժեքավոր առաջարկություններով:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով յոթ գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են ՀՀ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված գիտական ամսագրերում և ժողովածուներում:

Ատենախոսությունը ծավալային և ձևավորման տեսանկյունից կազմված է սահմանված չափանիշներին համապատասխան, գրված է ընդունելի գիտական ու հստակ լեզվաոճով: Ատենախոսության կառուցվածքը նույնպես հաջողված է, իսկ ընտրված հարցադրումների շրջանակը հնարավորություն է տվել ապահովելու նաև նյութի ամբողջականությունը և եզրահանգումների հիմնավորվածությունը:

Վերոնշյալով հանդերձ՝ ցանկանում ենք ատենախոսի ուշադրությունը հրավիրել ներքոնշյալ մի քանի դիտարկումների վրա.

1. Աշխատանքի շրջանակներում հեղինակը մանրամասն անդրադարձել է Վարչական դատարանի՝ ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու լիազորությանը և ներկայացրել առաջարկություններ այս լիազորության իրականացման կարգի վերաբերյալ:

Այդուհանդերձ, գտնում ենք, որ աշխատանքը առավել կշահեր, եթե նախքան ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու «ex officio» մատնանշման լիազորությունը վերլուծության ենթարկելը, հեղինակը անդրադառնար վարչական դատավարությունում հայցատեսակների դասակարգման անհրաժեշտությանը:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է վարչական հայցի չորս տեսակ, իսկ ՎԴՕ 3-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ մի կողմից իրավունք է տրվել վարչական մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու վարչական դատարան, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով կամ ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի, եթե առկա է իրավասության վերաբերյալ վեճ, իսկ մյուս կողմից չի նախատեսել նրանց այդ իրավունքի իրացման համար համապատասխան հայցատեսակ: Նշված պահանջները, ինչպես նաև ՎԴՕ

10-րդ հոդվածով նախատեսված գործերը չեն տեղավորվում ՎԴՕ-ով նախատեսված ոչ մի հայցատեսակի շրջանակներում:

Այսպիսով, կարող ենք նշել, որ ՎԴՕ-ով նախատեսված հայցատեսակները չեն ընդգրկում հանրային իրավահարաբերություններից բխող բոլոր հնարավոր իրավահարաբերությունների ծավալը, արդյունքում կամ Վարչական դատարանը քննում է պահանջներ, որոնք ընդգրկված չեն որևէ հայցատեսակի շրջանակներում, կամ մերժում հայցադիմումի ընդունումը:

Նշված հարցի լուծումը կարող էր լինել հեղինակի կողմից հայցատեսակներն ընդհանրապես վերացնելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը, որը հատկապես տրամաբանական և համահունչ կլիներ ատենախոսության շրջանակներում «ex officio» սկզբունքի գործողությունն ընդլայնելու՝ հեղինակի դիրքորոշմանը: Դատարանին ուղղակի կարելի էր վերապահել պահանջի քննության ռեժիմն ի պաշտոնե որոշելու լիազորություն, որի արդյունքում կարելի էր խուսափել ներկայումս վարչական դատարանում հայցադիմումները վերադարձնելու կամ դրանց ընդունումը մերժելու հակասական պրակտիկայից, ինչն ուղղակիորեն բացասաբար է ազդում անձանց դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման, արդարադատության մատչելիության սկզբունքի ապահովման վրա:

2. Հեղինակը պաշտպանության ներկայացվող դրույթներում առաջարկել է, որ Վերաքննիչ դատարանը պետք է կաշկանդված լինի ոչ թե վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջով, այլ հայցապահանջով և աշխատանքում մանրամասն անդրադարձել Վերաքննիչ դատարանի կողմից «ex officio» սկզբունքի իրացմանը:

Մինչդեռ, աշխատանքը առավել կշահեր, եթե հեղինակը անդրադառնար նաև Վերաքննիչ դատարանի կողմից Վարչական դատարանում քննության առարկա չդարձված փաստական հանգամանքներ պարզելու, դրանք հաստատելու և նոր փաստերի հիման վրա Վարչական դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու հիմնախնդրին:

Այսպես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու դեպքերը խիստ սահմանափակ են, ստացվում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վերոնշյալ գործողությունների իրականացման դեպքում անձը զրկված է լինում դիրքորոշում հայտնելու և առնվազն մեկ ատյանում կայացված դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից:

Վերաքննիչ ատյանում «ex officio» սկզբունքի ամբողջական ծավալային կիրառումը, մեր կարծիքով, խնդրահարույց է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխավորման տեսանկյունից: Եթե առաջին ատյանի դատարանում քննության առարկա չդարձված փաստական հանգամանքների վերաբերյալ կողմը դիրքորոշում չի հայտնել, ապա վերաքննիչ ատյանում դրանք քննության առարկա դարձնելու արդյունքում թեև հնարավոր է ապահովել վերջինիս կողմից դիրքորոշում ներկայացնելու հնարավորությունը, սակայն բոլոր դեպքերում սահմանափակվում է բողոքարկման իրավունքի իրացումը միայն մեկ ատյանով, այն էլ վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու պարագայում, ինչը ևս երաշխավորել չի կարելի՝ հաշվի առնելով ՀՀ-ում վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական խնդիրները և կարգավիճակը, ինչպես նաև վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու կաբակցությամբ ձևավորված պրակտիկան: Այս մասով ատենախոսությունը ևս լուծումներ և առաջարկություններ չի պարունակում, մինչդեռ, ներպետական դատական ատյաններում դիրքորոշում արտահայտելու և դատական ակտը բողոքարկելու միջոցով արդար դատաքննության իրավունքը պաշտպանելու հնարավորությունը ապահովելու անհրաժեշտությունը բխում է թե ՀՀ սահմանադրական դատարանի, թե Եվրոպական դատարանի դիրքորոշումներից, թե Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականներից:

3. Հեղինակը հետևողականորեն բացահայտել է վարչական դատավարությունում «ex officio» սկզբունքի իրացման կարգը՝ մանրամասն նկարագրելով «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական

գործողություններից յուրաքանչյուրի իրականացման փուլը, մինչդեռ աշխատանքը առավել կշահեր, եթե դրանում անդրադարձ կատարվեր նաև գրավոր ընթացակարգի կիրառման դեպքում «ex officio» սկզբունքի իրացման հնարավորությանը և ծավալներին:

Վերոնշված դիտողությունները, այնուամենայնիվ, չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Լիլիթ Հովհաննեսի Պետրոսյանի հեղինակած ««Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացումը վարչական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.04 «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
18.06.2021թ.

ԵՊՀ, վարչ. դատավարության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահե Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ. Մ. Խաչիկյան